

ՕՐԵՆԱԴԻՐ - ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ, ԻՍԿ ԸՆԴՊԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆ ՉՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ»

Նոյեմբերի 21-ին «Ռազմավարություն-շինարար» քաղաքական կուսակցության կողմից խորհրդարան հրավիրված Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին պատասխանեց եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակի ստացման համար եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների կատարման ընթացքի ներկայացնող հարցերին:



Զբաղեցնելով խորհրդարանական ամբիոնը, Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ կփորձի պատասխանել առաջադրված բոլոր հարցերին, որն ուղղեց կուսակցության նախագահ Գիորգի Վաշաձեին:

- Նրանից հետո, երբ եվրախորհուրդն ընդունեց պատմական որոշում եւ երկրին շնորհեց եվրոպական հեռանկար, ինչը, իրոք, պատմական որոշում էր, խորհրդարանական մեծամասնությունը, մեր թիմի անդամները հանդես եկան նախաձեռնությամբ, ներկայացրին կոնկրետ ծրագիր, թե

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԲԱՆԱԶԵՎ ԿՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՅՅՆ ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՇԱԺՈՂՎԻՆ



Նոյեմբերի 20-ին Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում անցկացվեց ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովը, որի աշխատանքին մասնակցում էր նաև Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը՝ խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նախագահ Իրակլի Բերախիայի գլխավորությամբ:

Մադրիդում ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովը երկու բանաձեւ է ընդունել, որոնցում խոսվում է Վրաստանի մասին:

Զսպման եւ պաշտպանական նախաձեռնությունների վերաբերյալ բանաձեւում ասվում է, որ այն կոչ է անում ՆԱՏՕ-ի անդամ երկրների կառավարություններին եւ խորհրդարաններին՝ ժամանակին իրականացնելու:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

«ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՇԱՐԱԹԸ»՝ ՆԱԽԱԳԱՅԻ ՕՐԲԵԼԻԱՆԻՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Նոյեմբերի 21-ին Վրաստանի նախագահի նախաձեռնությամբ Օրբելիանիների պալատում «Սվանեթի օրերով» մեկնարկեց «Տարածաշրջանների շաբաթը»: Այն կտևի երեք օր:

Շաբաթի հիմնադրման նպատակն է՝ նպաստել մարզերի զարգացմանը, ներկայացնել տնտեսական եւ մշակութային ներուժը, ընդգծել մարզերի բազմազանությունը եւ խթանել դրանք ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային մակարդակով: «Երեք օրվա ընթացքում Սվանեթի մշակույթը եւ նրա ժամանակակից ներկայացուցիչը՝ Սվանեթիի տեղի բնակչությունը, լինելու են Օրբելիանիների պալատի տանտերերը: «Սվանեթի օրերի» շրջանակում՝ մշակութա-



յին ծրագրին գ ու լ գ ա հ ե ո կանցկացվեն պանելային քննարկումներ Սվանեթիի ինքնակառավարման, էներգետիկայի, տնտեսական ներուժի, մշակութային ժառանգության վերաբերյալ», - հայտնեցին նախագահի աշխատակազմում:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԵՐԿՐՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Նոյեմբերի 22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:



Նիստում փոխվարչապետ, Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին՝ կառավարության անդամներին ներկայացրեց վիճակագրական վարչության կողմից հրատարակված տվյալները երկրի էկոնոմիկայի վերաբերյալ:

ստեղծված իրավիճակի եւ տնտեսական գլոբալ անկման, 2022 թվականին Վրաստանում տնտեսական աճի միտումը պահպանվել է: Վերջերս վիճակագրական վարչության հրատարակած տվյալների համաձայն, Վրաստանում 2022 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին վավերացվել է երկրի տնտեսական աճ: 10,2 տնտեսական աճով Վրաստանը ոչ միայն տարածաշրջանում, այլև Եվրոպայում առաջիններից մեկն է,- հայտարարեց փոխվարչապետ Լեւան Դավիթաշվիլին:

Ինչպես նշեց փոխվարչապետը, չնայած համավարակի եւ տնտեսական գլոբալ անկման պայմանների, անցյալ տարի Վրաստանում վավերացվել է 10,5 տոկոս տնտեսական աճ:

- Չնայած առկա մարտահրավերների, տարածաշրջանում

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊՆԵ ԵՐԱԿ ԸՆԿՈՒՅՑԱՆ ԱՎԱՆՈՒՄ, ԽՈժՈՒՆԻ ԵՎ ԱՐՔՅՈՐՓԻ ԳՅՈՒՆԵՐՈՒՄ

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանն այցելեց Քվեմո Քարբիլի տարածաշրջան:

Տարածաշրջանում գտնվելու ժամանակ Աշոտ Սմբատյանը եղավ Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանում, Խոժոնի, Աղբյուրի գյուղերում, որտեղ հանդիպումներ ունեցավ տեղի եւ հարակից գյուղերի բնակչության հետ:

Հայաստանի դեսպանին ուղեկցում էին Քվեմո Քարբիլի տարածաշրջանի փոխնահանգապետ Կախա Կոբերիձեն, Մառնեուլիի սակրեբուլոյի պատգամավորներ Արսեն Հախաբաբյանը եւ Գրիգոր Գրիգորյանը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՏԳԻՊՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱԿՆ ԽՈՒՄՆԱՆ ՀԱՐՅՆ ԵՐ

Նոյեմբերի 21-ին Վրաստանի խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության եւ քաղաքացիական ինտեգրման կոմիտեի նախագահ Սիխեիլ Սարջվելաձեն հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը խոսվեց ինտեգրման գործընթացի խթանման անհրաժեշտության եւ ապագա հնարավոր նախաձեռնությունների մասին:



- Կարելու է ավելի շատ հնարավորություններ ունենալ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ զրուցելու համար: Նրանք մեր երկրի իրավահավասար քաղաքացիներն են եւ, բնականաբար, նրանք տեսած խնդիրներն ու առաջնահերթությունները պետք է հասկանալ, լավ վերլուծել եւ, դրանից ելնելով, անհապաղ աշխատանք տանել մեր երկրի բնակչության հատվածին հուզող խնդիրների կարգավորման ուղղությամբ,- նշեց Սիխեիլ Սարջվելաձեն:

Հանդիպմանը ներկա էին Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ախալցխի, Մառնեուլիի, Բուլնիսիի եւ Գարդաբանի մունիցիպալիտետների բնակիչ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները: Հանդիպումն անցկացվեց Վրաստանի ռազմավարության եւ միջազգային հարաբերությունների հետազոտության (ՌոնդելուՐ) հիմնադրամի կազմակերպմամբ:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՎԱՆԳԱԿԱՆ



ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՎՐԱՍԱՆԸ ՆՇԵՑ ԳԻՈՐԳՈՒՄ

Նոյեմբերի 23-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Սուրբ Գիորգիի նահատակությունը:

Այդ օրը երկրի Ուղղափառ եկեղեցիներում մատուցվեց տոնական պատարագ: Թբիլիսիի Առաջնորդանիստ Սուրբ Երրորդության տաճարում տոնական պատարագը մատուց-

վեց Զամայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի օրհնությամբ: Պատարագին ներկա էին Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների, քաղաքական եւ

հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հավատացյալներ:

Նշենք, որ Վրաց Ուղղափառ եկեղեցին Գիորգոբան տոնում է տարին երկու անգամ՝ մայիսի 6-ին՝ Սրբի մահապատժի օրը եւ նոյեմբերի 23-ին՝ անվի վրա նրա խոշտանգումների օրը:

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԿԱՐՅԱՆՎԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺՔՈՒՅՐԵՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Վրաստանի բռնազաղթվածների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի հունվարի 1-ից բժիշկների եւ բուժքույրերի համար կսահմանվի նվազագույն ժամավճար:

Մասնավորապես, բժիշկների նվազագույն աշխատավարձը ժամում յոթ լարի է, ամսական միջինը 1260 լարի, իսկ բուժքույրերի համար՝ 4,4 լարի՝ ժամում միջինը ամսական 792 լարի:

Նախարարության տեղեկություններով՝ աշխատավարձերի բարձրացումը կվերաբերի մինչեւ 9000 բժիշկների եւ ավելի քան 8000 բուժքույրերի:

Առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլին դեռեւս 2022 թվականի սկզբին հայտարարել էր բժշկական ոլորտում աշխատողների համար նվազագույն աշխատավարձի շեմ սահմանելու մասին:

Բարեփոխման համաձայն, հաջորդ տարվանից Զամնդ-

հանուր առողջապահության պետական ծրագրում ընդգրկված բոլոր կլինիկաների ղեկավարությունը պարտավորվելու է որոշել բժիշկների եւ բուժքույրերի աշխատավարձը՝ հաշվի առնելով Առողջապահության նախարարության կողմից ներկայացված նվազագույն սահմանաչափը: Նոր կանոնակարգի համաձայն՝ աշխատավարձերի բարձրացումը կվերաբերի մինչեւ 9000 բժիշկների եւ ավելի քան 8000 բուժքույրերի:



ԻՎԱՆԵ ԶԻՄԻՅԵ. «ԶԳՈՒՇԱՑԷՔ, ԵՐԿՐՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՎՈՒՄ Է, ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ, ՀՈՆԿՈՆԳՅԱՆ ՎԻՐՈՒՄԸ, ՎԱՎԵՐԱՑՎԵԼ ԵՆ ՆԱԵՎ H1-N1-Ը ԵՎ ԿՈՎԻԴ-19-Ը»



Թբիլիսիի Իաշվիլու անվան մանկական կլինիկայի տնօրեն Իվանե Զիմիյեի խոսքով՝ երկրում գրիպով վարակվելու դեպքերը հասել են կիզակետին:

Նաեւ H1-N1 տեսակի վիրուսով վարակման դեպքեր:

- Ներկա դրությամբ վտանգավոր է երեք տիպի վարակ կորոնավիրուսը, որը վերջնականապես չի հաղթահարվել, գրիպի վիրուսը եւ երրորդ տեսակի H1-N1 վիրուսը, որը նոր է հայտնաբերվել, եւ որը մինչ օրս նման ակտիվություն չէր ցուցաբերում: Շատ երկրներում արդեն նշում են, որ այս տարին վիրուսների ակտիվության տեսանկյունից վտանգավոր կլինի հատկապես երեխաների շրջանում: Վարակումների աճը պայմանավորել է կլինիկաների ծանրաբեռնվածությունը, քանի որ պահանջվում է վարակվածների հոսպիտալացում: Վարակման ախտանշաններն են շնչառության ծանրացում, խռոց: Վիրուսը հատկապես վտանգա-

վոր է մինչեւ 2 տարեկան երեխաների համար, - հայտարարեց Իվանե Զիմիյե: Սեզոնային վիրուսի շրջանառության մասին է տեղեկացնում նաեւ առողջապահության նախարարությունը, թեւ նշում է, որ Վրաստանում սեզոնային վիրուսների շրջանառությունը չի տարբերվում անցյալ տարիներից եւ խուճապի մատնվելու պատճառ չկա:

Վերատեսչության տեղեկատվությամբ, ներկայումս առավել տարածված են ռինովիրուսները եւ շնչառական վիրուսները, ավելի քիչ են ադենովիրուսները, իսկ գրիպի դեպքերն այդքան էլ չափ չեն:

Առողջապահության նախարարության առաջարկությունները նույնն են հիգիենա եւ հեռավորություն, հիվանդի մեկուսացում:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԸ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՑԻՆԵՐԻՆ ՆԵՐՎԱՅԱՑՐԵՑ 2022-ԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը մունիցիպալիտետի հանրությանը ներկայացրեց հաշվետվություն՝ 2022 թվականի ընթացքում իրականացված գործունեության մասին:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչական շենքի նիստերի դահլիճում անցկացված հանդիպմանը ներկա էին մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը, սակրեբուլոյի անդամները, քաղաքապետարանի աշխատակիցները եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի հասարակությունը:



ԱՎԱԿԵՑ ԱՄԱԼՑԻՆԵԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Ախալցխի մունիցիպալիտետում մեկնարկեց հաջորդ տարվա բյուջեի նախագծի հանրային քննարկման գործընթացը, որին մասնակցում են տեղական ինքնակառավարման ոչ կառավարական հատվածի, լրատվամիջոցների ներկայացուցիչներն ու շահագրգռված քաղաքացիները:

Մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Դավիթ Լոմիձեի նախագահությամբ անցկացված հանդիպմանը՝ Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին եւ առաջին փոխքաղաքապետ Իլիա Ջարդիաշվիլին մանրամասն տեղեկատվություն հայտնեցին 2023 թվականի բյուջեի առաջնահերթությունների ու ծրագրերի մասին:

Հանդիպմանը բյուջեի նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի ֆինանսաբյուջետային ծառայության ղեկավար Գելա Լոմիձե: Նշվեց, որ 2023 թվականի բյուջեում ավելացել է 29 միլի-



հերթություններն են ենթակառուցային, առողջապահության, սոցիալական, մշակութային, կրթական, նախադպրոցական հաստատությունների ուղղությունները:

Հանդիպման անդրադարձան մունիցիպալիտետի տրանսպորտի կարգավորման, ենթակառուցային առանձին հիմնարկների լուծման, առողջապահության եւ սոցիալական ծրագրերի ֆինանսավորման հարցերին:

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ 15 ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ներում է շնորհել 15 դատապարտյալի: Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելուց ազատվել է 9 դատապարտյալ, այդ թվում՝ 2 կին: Վեց դատապարտյալի պատժի ժամկետը կրճատվել է:

ՎԱՐԿ՝ 360 ՀԱՋԱՐ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ

Վրաստանում, 2022 թվականի անցած ժամանակահատվածի տվյալներով, 360 հազար թռչակառու ներկայումս ձեւակերպած վարկ ունի, նշված է Վրաստանի Ազգային բանկին «Լիբերթի Բանկի» ներկայացրած ֆինանսական հաշվետվության մեջ:

Ըստ հաշվետվության՝ այդ վարկերի ընդհանուր արժողությունը կազմում է 334 մլն լարի: Ըստ այդմ, մեկ կենսաթոշակային վարկի միջին չափը կազմել է 924 լարի:

Տեղեկացնենք, որ 2022 թվականի մայիսին «Լիբերթի Բանկը» հերթական անգամ շահել է պետության հայտարարած մրցույթը եւ ստացել առաջիկա 7 տարիների կենսաթոշակ տրամադրելու իրավունքը:

19 ՏԱՐԻ՝ ՎԱՐՈՒԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՏՈ

19 տարի առաջ՝ նոյեմբերի 23-ին, տեղի ունեցավ Վարդերի Հեղափոխությունը: Այն հաջորդեց 2003 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերջիններս կեղծվել էին իշխող երկու կուսակցության «Քաղաքացիների միություն» եւ «Վերածննդի» օգտին:

Նոյեմբերի 22-ին խորհրդարանի առաջին նիստի ժամանակ ցուցարարները ներխուժեցին խորհրդարան եւ պահանջեցին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հրաժարականը: Նույն օրը կայացավ Էդուարդ Շեւարդնաձեի եւ ընդդիմության ղեկավարների հանդիպումը, որից հետո նախագահը հրաժարական տվեց, իսկ ամիսներ անց կայացած նախագահական ընտրություններում հաղթեց «Միացյալ ազգային շարժում» կուսակցության առաջնորդ Միխեիլ Սաակաշվիլին:

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Table with 2 columns: Տարադրամ, Լարի. Rows include 1 ԱՄՆ ԴՈԼԱՐ (2.7117), 1 ԵՎՐՈ (2.8218), 100 ՌՈՒՔԼԻ (4.4871), 1000 ԴՐԱՄ (6.8665)

ՆԿԻՐՎԱԾ ԷՐ ՄԵԾՆ ՔՆԱՐԵՐԳՈՒՄ

ՆԻՆՈՑՄԻՆԴԱ. ՕՐԸ ՏԵՐՅԱՆՈՎ ԷՐ ՉԱԳԵՑՎԱԾ



Նոյեմբերի 18-ին Նինոծմինդայի քաղաքապետարանի, «Ջավախքի աջակցություն» հիմնադրամի և Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համատեղ կազմակերպմամբ, Նինոծմինդայում կայացավ «Աշնան մեղեդի. Պոեզիայի երեկո» խորագրով միջոցառումը՝ նվիրված հայ նշանավոր քնարերգու Վահան Տերյանին:

Միջոցառմանը ներկա էին տեղի մշակութային և հասարակական գործիչներ, Գյումրիի քաղաքապետ Վարդգես Սամսոյանը, Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Դեմիրճյանի տուն-թանգարանի տնօրեն Կարինե Ռաֆայելյանը, Տերյանի պոեզիայի երկրպագուներ...

«Ջավախքի աջակցություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Սամվել Մանուկյանի խոսքով, միջոցառման նպատակը հայկրացական հարաբերությունների առավել ամրապնդումն ու տեղի բնակչությանը եւս մեկ անգամ հայ մեծանուն գրողին լսելի դարձնելն էր:

Յնչեց հայերեն և վրացերեն ասումը՝ Տերյանի բանաստեղծություններից ու երգեր բանաստեղծի ստեղծագործությունների հիման վրա՝ երգիչներ Մավր Սկոտչյանի և Վահագ Ռաչի կատարմամբ: Անդրադարձ կատարվեց նաև Վահան Տերյանի տուն-թանգարանի վերականգնման նախագծին:

«Վրաստանի» ընթերցողներին հիշեցնեց, որ, 2019 թվականին, Տերյանական օրերի շրջանակներում, «Ջավախքի աջակցություն» հիմնադրամի

նր հայտարարել էր Վահան Տերյանի տուն-թանգարանի վերականգնման պատրաստակամության մասին: 2021 թվականին Գանձա գյուղում բացվեց բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանի տուն-թանգարանի ցուցասրահը, որն այժմ է ընկնում հարուստ և գեղեցիկ դիզայներական աշխատանքով, եռաշերտ ցուցադրությամբ ու նորարարական լուծումներով: Ցուցասրահում ներկայացվում են Վահան Տերյանի կյանքի 7 կարեւորագույն փուլերը. մանկության տարիները, Լազարյան ճեմարանում ուսանողական կյանքը, Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի հետ ունեցած հանդիպումները, թարգմանչական, գիտական, հասարակական և քաղաքական գործունեությունը, ինչպես նաև՝ իր կյանքի վերջին օրերը Օրենբուրգում: Ի դեպ, «Arloopa» հեռախոսային հավելվածի միջոցով հնարավոր է «կենդանացնել» ցուցասրահի պատերի նկարները:



ԼՈՒՄԻՆԵ ՎԱՐՂԱՅԱՆ ՆԻՆՈՑՄԻՆԴԱ

«ԱՇՆԱՆ ՏՈՆԸ»՝ ՇԱՐՈՒՄՅԱՆ ԱՎԱՆՈՒՄ

ԱՇՆԱՆ ԲՆԱՊԱՏԿԵՐԸ՝ ՈՂՋ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՄ

Սառնուկի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 3 դպրոցում այս տարի ևս նշեցին արդեն ավանդական դարձած բարեբեր աշունը՝ փառաբանող «Աշնան տոնը»:



Միջոցառման գաղափարը և կազմակերպչական աշխատանքները կատարել են 12-րդ դասարանիցները՝ դասուղեկ ժամանա Մարությանի օգնությամբ:

Ի հարկ է աշնան թագուհին տերեւաթափը, ներկայացվեցին նաև կոմպոզիցիաներ, աշնան բարիքները հանալրելով նաև ձեռքի աշխատանքներով: Աշակերտները նաև շնորհանդեսի ձևով ներկայացրել են իրենց գաղափարը, թե ինչու են կոմպոզիցիաներն այդ կերպ ներկայացրել:

Միջոցառման ժամանակ ներկայացվել է աշնան բնապատկերը՝ ողջ պարունակությամբ՝ արեւի կերպար, անձրեւի կերպար և,

և շնորհանդեսի ձևով ներկայացրել են իրենց գաղափարը, թե ինչու են կոմպոզիցիաներն այդ կերպ ներկայացրել:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՂԱՆԴԵՐ

ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅԻ ԴԱՇՆԱՎԱԶԱՐՆԵՐԸ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱՆ ՓԱՐԻՉՈՒՄ. ԱՆԱՀԻՏ ՍՏԵԼՍԱՇՈՎԱՆ ՆՐԱՆՅ ՇԱՐՔՈՒՄ Է

«Վրաստան» թերթը, «Ալիք Մեդիա» լրատվական գործակալության հետ համագործակցության շրջանակներում, ներկայացնում է գործակալության կայքէջում տեղ գտած հրապարակումներից:

Վրաստանի խորհրդարանի մշակույթի հանձնաժողովի նախագահ, հայտնի դաշնակահար Էլիսո Բուլբվաձեի գնահատել է Վրաստանի տարբեր մարզերից և Հայաստանից դաշնակահարների ելույթները՝ անցկացնելով նաև վարպետության դաս:

շրջանակներում՝ կայացել է Երեւանից հրավիրված դաշնակահարների լսումները: Նրանք վրացի երաժիշտների հետ միասին կմասնակցեն վերոնշյալ գալա համերգին:

Այս պահի դրությամբ հայտնի է, որ Վրաստանից ելույթ կունենան 4 դաշնակահարներ, ընտրյալների շարքում է նաև ախալքալաքցի դաշնակահարուհի Անահիտ Ստելմաշովան:

Անահիտ Ստելմաշովան արդեն 7 տարի է, ինչ հանդես է գալիս Փարիզում տեղի ունեցող ամենամյա գալա համերգին:

- Այս տարի առաջին անգամ հիշյալ համերգին կմասնակցեն նաև Հայաստանից ներկայացուցիչներ: Ընտրեցինք, թե ինչ կատարումներով ենք հանդես գալու, նաև ապրիլի վերջին համերգ է կայանալու Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում, որին ևս մասնակցելու են, հետեւաբար

կազմեցինք նախագիծ նաև այս համերգի համար.- «Ալիք մեդիայի» հետ գրույցում նշեց Անահիտը և շարունակեց,- Այս անգամ շատ դժվար ստեղծագործություն էի ընտրել, նվագում էի Ստրավինսկիի Fairbird ստեղծագործությունը: Շատ էի ուզում փորձել, ուսուցիչս ասաց, որ շատ բարդ է, հնարավոր է՝ չկարողանամ նվագել, սակայն համարձակվեցի փորձել և լավ գնահատական ստացա Էլիսո Բուլբվաձեի:



Անահիտ Ստելմաշովան հպարտությամբ է արձանագրում, որ վերջերս էլ ավելի ամուր ու ջերմ կապ է նկատում Վրաստանի և Հայաստանի միջև մշակութային ասպարեզում:

- Հայաստանից շատ հաճախ է պատվիրակություն ժամանում Վրաստան և հակառակը, պայմանավորվում են համերգների, նոր ծրագրերի և երաժշտության ոլորտում համագործակցության մասին, ինչի առթիվ շատ ուրախ եմ:

«ԱԼԻՔ ՄԵԴԻԱ»

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՑԱԾՐ ԳՆԱՃՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍԱՆՈՒՄ Է

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ Վրաստանում 2022 թվականի հոկտեմբերին բարձր գնաճ է նկատվել:



Վիճակագրության համաձայն՝ 2022 թվականի հոկտեմբերին երկրում տարեկան գնաճը կազմել է 11,5 տոկոս, մինչդեռ օգոստոսին այդ ցուցանիշը կազմել է 10,9 տոկոս:

րեկան գնաճը կազմել է 83,5 տոկոս:

Հայաստանում տարեկան գնաճը հոկտեմբերին կազմել է 9,9 տոկոս: Ի դեպ, տարածաշրջանում ամենացածր գնաճը Հայաստանում է, իսկ Վրաստանը՝ գնաճի տեմպով, Հայաստանից հետո երկրորդ տեղում է:

Արդեջանում հոկտեմբերին գնաճի ընդհանուր մակարդակը բնութագրվում է աճի միտումով. երկրում տարեկան գնաճը կազմել է 15,6 տոկոս:

Հարեւան Թուրքիայում 2022 թվականի հոկտեմբերին տարեկան գնաճը կազմել է 13,7 տոկոս:

Գնաճը բարձր է նաև Ռուսաստանում, որտեղ հոկտեմբերին տարեկան գնաճի մակարդակը կազմել է 13,7 տոկոս:

ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ, ԿՈՍՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՃՐ՝ ԿՈՆԿՐԵՏ ԹՎԵՐՈՎ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2022 թվականի հոկտեմբերին, նախորդ ամսվա համեմատ, գնաճը երկրում կազմել է 0,5 տոկոս, իսկ տարեկան գնաճը՝ 10,6 տոկոս:

2022 թվականի հոկտեմբերին բազային գնաճի ցուցանիշը, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, կազմել է 7,3 տոկոս, իսկ տարեկան բազային գնաճը առանց ծխախոտի, նույնպես 7,3 տոկոս է:

16,9 տոկոս ձկնեղեն՝ 12,3 տոկոս, միս և մսամթերք՝ 9 տոկոս, բանջարեղեն՝ 3,5 տոկոս, մրգեր՝ 3,4 տոկոս:

Տարեկան գնաճի ձեւավորման վրա հիմնականում ազդել են հետևյալ խմբերի գների փոփոխությունները.

Տրանսպորտային խմբում գներն աճել են 11,6 տոկոսով, ինչն արտացոլել է ընդհանուր ցուցանիշի 1,38 տոկոսային կետով աճը: Տրանսպորտային ծառայությունների գները՝ 13,8 տոկոս, անձնական տրանսպորտային միջոցների շահագործման գները՝ 13,2 տոկոս:

Պարենային ապրանքներ և ոչ ոգելից խմիչքներ խմբում գներն աճել են 15,8 տոկոսով՝ արտացոլելով տարեկան 5,22 տոկոսային կետով գնաճը, հաց և հացաբուլկեղեն՝ 26,1 տոկոս, կաթ, պանիր և ձու՝ 22,1 տոկոս, հանքային և աղբյուրի ջուր, ոչ ոգելից խմիչքներ և բնական հյութեր՝ 21,9 տոկոս, սուրճ, թեյ և կակաո՝ 20,6 տոկոս, ձեթ և յուղ՝ 18,3 տոկոս, շաքարավազ, ջեմ և այլ քաղցրավենիքներ՝

Բնակարան, ջուր, էլեկտրաէներգիա, գազ խումբն արձանագրել է գների 13,5 տոկոս աճ, որն արտացոլվել է տարեկան գնաճում 1,31 տոկոսային կետով:

Բնակարանների գծով փաստացի հարկ՝ 27 տոկոս, բնակարանների ընթացիկ սպասարկում և վերանորոգում՝ 13,1 տոկոս, էլեկտրաէներգիա, գազ և ջեռուցման այլ տեսակներ՝ 5,7 տոկոս: